

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի
ապրիլի 27-ին կայացած Գիտական Խորհրդի նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 36-ը (ցուցակը կցվում է)

Նիստին ներկա էր նաև ԵՊՀ ռեկտոր Ա.Հ.Սիմոնյանը

Նախքան խորհրդի նիստի բացումը Գիտական Խորհրդի նիստը ղեկավարելու համար առաջարկվեց Պետրոս Գարուշի Դավթյանի թեկնածությունը:

Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն հաստատվեց:

Նիստի նախագահ Պ.Գ.Դավթյանը ներկայացրեց օրակարգը

Օրակարգ

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկանի ընտրություններ

Օրակարգը միաձայն հաստատվեց

ԼՄԵՑԻՆ. Պ.Գ.Դավթյանը ներկայացրեց Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկանի պաշտոնում առաջադրված թեկնածուներին: Պ.Դավթյանը նշեց, որ առաջադրված թեկնածուները երկուսն են՝ դոց.Մ.Ա.Գրիգորյան և պրոֆ.Մ.Գ.Մանասյան: Հաղորդման ընթացքում Պ.Դավթյանի կողմից մանկարկրիտ կերպով ներկայացվեցին յուրաքանչյուր թեկնածուի անհրաժեշտ փաստաթղթերը և անձնական գործերը. Մ.Գրիգորյանի առաջադրումը ներկայացվել է Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության, Սերվիսի, Երկրաֆիզիկայի, Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնների կողմից /նիստերի քաղվածքները կցվում են/, մյուս թեկնածուն՝ Մ.Մանասյանը ընտրություններին մասնակցում էր ինքնաառաջադրման սկզբունքով: Նախքան

թեկնածուներին ձայնը տրամադրելը նիստի աշխատանքները կազմակերպելու համար Պ.Դավթյանն առաջարկեց ընդունել աշխատակարգ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Թեկնածուների կողմից ծրագրի ներկայացման համար հատկացնել 10 րոպե, թեկնածուների եզրափակիչ ելույթների համար հատկացնել 3 րոպե ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկությունն ընդունվեց միաձայն

ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՄԵՆՑ. Ըստ այբբենական կարգի իր ծրագիրը ներյակայացրեց դեկանի թեկնածու Մարատ Արիսի Գրիգորյանը /ծրագիրը կցվում է/:

Ձայն տրվեց թեկնածու Մաքսիմ Գառնիկի Մանասյանին

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Հարցեր չհնչեցվեցին:

ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՄԵՆՑ. դեկանի թեկնածու Մ.Գ.Մանասյանը, ով ողջունեց ներկաներին և մեջբերեց, որ որպես պրոֆեսոր 2 անգամ ընտրվել է միաձայն նույն գիտխորհրդի կողմից: Նա հիմնավորեց իր ինքնառաջադրումը և նշեց, որ դիմել է սահմանված ժամկետների վերջին օրը՝ տեսնելով, որ Մ.Ա.Գրիգորյանը հանդիսանում է միակ թեկնածուն: Ցավով նշեց, որ Մ.Գրիգորյանը արժանի հետևորդ չի պատրաստել: Նշեց նաև, որ դեկանի պաշտոնը այնքան էլ սրտով չէր և ընտրվելու դեպքում 1 տարվա ընթացքում կնախապատրաստի արժանի հետևորդ և կանցներ իր հարազատ գործին՝ դասագրքերի տպագրում, պրոֆեսորադասախոսական գործունեություն: Նշեց, որ հարգում է դեկան պ-ն Մ.Գրիգորյանին, քանի որ վերջինս լավ մենեջեր է և մոտ 40 տարի դեկան է:

Իրեն հատկացված ժամանակում պարոն Մ.Մանասյանը, ոչ մի խոսք չասաց իր ծրագրի վերաբերյալ, խնդրեց տալ լրացուցիչ ժամանակ, ինչը սակայն կրկին չօգտագործեց ծրագիրը ներկայացնելուն:

- Ֆակուլտետում ամենակարևորը համարում են բարոյահոգեբանական վիճակը: Այստեղ մարդիկ վախենում են սեփական կաճիք արտահայտելուց, տիրում է վախի մթնոլորտ,-ասաց Մ.Մանասյանը: Խոսքի ընթացքում թեկնածուն շնորհակալություն հայտնեց ռեկտորին սկզբունքային որոշումներ կայացնելու համար, առ այն որ համակողմանի մոտեցում դրսևորվեց և 3 ամբիոնի վարիչներ ազատվեցին աշխատանքից:

- Ես դասի ժամանակ խոսում եմ ուսանողների հետ իրենց ազատ քաղաքացի լինելու մասին, ոչ թե շինծու լինելու մասին,-ասաց Մ.Մանասյանը: Նա ներկայացրեց իր կողմից տպագրված գրքերը, որոնք մասնագիտական հանձնաժողովի կողմից գնահատվել և հաստատվել են որպես գրագողության արդյունք և ֆակուլտետի գիտ.խորհրդի կողմից երբևէ չեն երաշխավորվել տպագրության: Խոսեց նաև անձնական բնույթի այլ հարցերից /մասնագիտական խորհրդում որդու գիտական աշխատանքի քննարկում/: Ասաց, որ ներկայացվելիք ծրագիրը բաղկացած էր 3 բաժիններից՝ կրթական, գիտահետազոտական և միջազգային համագործակցության: Խոսեց ֆակուլտետի ռեյտինգից, խոսեց ֆակուլտետում նախկինում աշխատող պրոֆեսորներից, խոսեց ստիմուլի պակասի մասին, ֆակուլտետում նոր գաղափարների բացակայության մասին: Դժգոհեց սերվիսի բաժնում այլ ամբիոններից դասախոսելու վերաբերյալ:

Հատկացված լրացուցիչ ժամանակահատվածում Մ.Մանասյանը այնպես էլ չներկայացրեց իր ծրագիրը:

ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ. Վ.Պ.Վարդանյանն իր հարցով փորձեց հստակություն մտցնել Մ.Մանասյանի այն դիտարկմանը թե ֆակուլտետում “սոցիալ-տնտեսական աշխարհագրություն” ամբիոնում թեկնածուական աշխատանք պաշտպանող չկա, այն դեպքում, երբ դրանց թիվը հասնում է 3-ի:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՅԱՆ.

Մ.Սուվարյանը կրկին անգամ հնչեցրեց օրակարգը՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի ընտրություն: Երկու թեկնածուներին լսելուց հետո շեշտեց, որ կողմնորոշվելու և որոշում կայացնելու համար ունեն կամք և վճռականություն: Որպես սերվիսի ամբիոնի դասախոս, տեսականորեն վերանալով անձերից, խոսեց դեկանի կատարած և ծրագրով ներկայացված աշխատանքների մասին, քանի որ կրթությունը և գիտությունը դա ծառայություն է: Դեկանը չի իշխում այլ ծառայություն է մատուցում, կարգավորում կազմակերպում է մոտիվացնում և վերահսկում է: - Մենք ուզում ենք ընտրել դեկան, հասկանալով նրա կատարած պարտականությունները: Արդյո՞ք մեր թեկնածուները համապատասխանում են այդ պահանջներին: Մենք պետք է հետևողական լինենք այն գաղափարին թե արդյո՞ք պաշտոնյան պատրաստ է ծառայելու: Ճանաչելով երկու թեկնածուներին էլ

ընտրություն կատարելուց չմոռանանք թեկնածուների փորձը, անցած ուղին և առաջադրվող պահանջներին բավարարող կարևորագույն հատկանիշները: Առաջարկեց քվեարկել Մ.Գրիգորյանի օգտին:

Ա.Ս.Մարդարյանը խոսեց Մ.Գրիգորյանին մասնագիտության ակունքներից ճանաչելու մասին: Հնչեցրեց Մ.Գրիգորյանի, որպես անձի և անհատի դրական կողմերի մասին: Խոսքի ավարտին հորդորեց քվեարկել Մ.Գրիգորյանի օգտին:

Ն.Ա.Հարությունյանը ելույթի ընթացքում խոսեց ֆակուլտետի համար պահի կարևորության մասին: Ի պատասխան Մ.Մանասյանի դիտարկման, նշեց, որ Մ.Գրիգորյանը իհարկե ունի հետևորդներ պարզապես, գնահատելով Մ.Գրիգորյանի աշխատանքի ոճը, կարողություններն ու հմտությունները ցանկանում են աշխատել այդ կոլլեկտիվում իր իսկ ղեկավարությամբ: Միաժամանակ շնորհակալություն հայտնեց Մ.Մանասյանին մասնակցության համար, ինչը արդար և անաչառ ընտրության վկայությունն է:

Գ.Փ.Ալեքսանյանը հնչեցրեց իր անձնական կարծիքը, որը ձևավորվել էր դեռ 2008թ-ից: Հիշեցրեց ներկայիս թեկնածու, այն ժամանակ ամբիոի դասախոս պրոֆ.Մ.Մանասյանի խոսքը ով 2008 թ-ին բարձրաձայնել էր Մ.Գրիգորյանի լավ կառավարիչ և խնդիրներին հստակ լուծում տվող ղեկավար լինելու փաստը: Մ.Գրիգորյանին ճանաչելուց հետո հաստատվեց այդ միտքը: - Լսեցինք ծրագիրը, և անկառու են ֆակուլտետում փոփոխման ենթակա քայլերը: Կոչ եմ անում ձայնը տալ թեկնածու Մ.Գրիգորյանին՝ ելնելով փորձառության և ներկայացված ծրագրից,-ասաց Գ.Ալեքսանյանը:

Մ.Խ.Համբարձումյան. - 2 տարի հանդիսանում եմ ՈւԽ նախագահ, ընտրվելու առաջին իսկ օրվանից ՈւԽ աշխատանքները կազմակերպելիս ստացել եմ Մ.Գրիգորյանի աջակցությունը: Այն ինչը վերաբերում է ուսանողների շահերին ապա կարող եմ ասել, որ պ-ն Մ.Գրիգորյանը այդ շահերի լավագույն պաշտպանն է: Բազմիցս Մ.Գրիգորյանը հանգուցալուծում է տվել է ուսանողի ոչ ճիշտ հարցադրումներում՝ զերծ պահելով ուսանողին կոնֆլիկտային իրավիճակներից:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Սահմանափակել ելույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ելույթների սահմանափակումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՐ

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Մ.Ա.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց ջերմ խոսքերի և դրական կարծիքի համար: Մա համագործակցության արդյունք է և ուրախ եմ հատկապես ՈւԽ կողմից հնչեցրած կարծիքի համար:

Իր եզրափակիչ խոսքում Մ.Գ.Մանասյանը խնդրեց 20-25 րոպե հատկացնել ծրագիրը ներկայացնելու համար: Կրկին անգամ չխոսելով ըստ էության շարունակեց ֆակուլտետի ավտորիտար ռեժիմից: Բարձրաձայնեց իր աշխատանքից ազատման գեկուցագրերի բովանդակությունը: Դժգոհեց խոսքի ազատությունը սահմանափակելուց:

Կրկին ժամանակ հատկացնելու մասին թեկնածու Մ.Մանասյանի խնդրանքը գիտ.խորհրդի անդամների կողմից քվեարկության արդյունով մերժվեց:

Բուռն քննարկումներից հետո Մ.Մանասյանը ինքնաբացարկ հայտարարեց:

Բաց քվեարկության արդյունքում Մ.Մանասյանի ինքնաբացարկը ընդունվեց միաձայն:

Խոսքը տրվեց ռեկտոր պ-ն Ա.Հ.Սիմոնյանին խոսեց արատավոր երևույթի՝ գրագողության մասին, նշելով, որ ստեղծագործ մարդու համար գրագողությունը հանցագործություն է: - Ցավում եմ, որ չի ցանկանում ներկայացնել իր ծրագիրը և թեկնածու պրոֆեսորը թողնում է համալսարանը և գնում է,-ասաց Ա.Սիմոնյանը: Խոսեց ղեկավարի նկատմամբ հարգանք ունենալու մասին: Նշեց, որ բոլոր աշխատողներն էլ թերություններ ունեն և պետք չէ վախենալ քննադատությունից: Խոսեց ֆակուլտետը գիտակրթական ինստիտուտի կազմակերպելու մասին: Ինստիտուտում կարելի է կենտրոնացնել լավագույն կադրեր, միջազգային լայն համագործակցություն և կլաստերային համակարգ, որը հնարավորություն կընձեռի միավորելու գիտությունը և կրթությունը: Այդ տեսակետից ձեր ֆակուլտետը ունի առավել մեծ հնարավորություններ, – ասաց ռեկտորը: Քննադատաբար խոսեց երիտասարդության թվի փոքր լինելու մասին: Խոսեց համալսարանում ազատ մթնոլորտի և խոսքի ազատության մասին և մերժեց ԵՊՀ-ում վախի մթնոլորտի առկայությանը: Խոսեց Սերվիսի էկլեկտիկ գիտություն լինելու մասին, ինչը հնարավորություն է ընձեռում հարակից մասնագետներին դասավանդելու բարձր

որակ ապահավելու պայմանով: Մ.Գրիգորյանի վերընտրվելու դեպքում Ա.Սիմոնյանը ցանկություն հատնեց, որպեսզի ֆակուլտետը դառնա որակի կենտրոն՝ աշխարհի ուժեղագույն համալսարանների հետ ոտք մեկնելու համար և ֆակուլտետի միջազգայնացնելու հանգամանքը դարձնել «идея фикс»:

- Ռեկտորատը և ես անձամբ գոհ ենք Մ.Գրիգորյանի աշխատանքից, ասաց Ա.Սիմոնյանը - նա դրական անձնավորություն է և իր վերընտրությունը ֆակուլտետին կրերի նոր որակ, նոր աշխատանքներ: Խոսքի ավարտին Ա.Սիմոնյանն ասաց, որ վաստակի դեմ չի կարելի չարախոսել:

Ելնելով թեկնածու Մ.Մանասյանի ինքնաբացարկից՝ նիստի նախագահ Պ.Դավթյանն առաջարկեց որպեսզի քվեաթերթիկում մնա միայն Մ.Ա.Գրիգորյանի անունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ. Ընտրություն անցկացնելու համար կազմել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վ.Պ.Վարդանյան Ս.Ս.Քեյյան և Ա.Գ.Հակոբյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ Վ.Պ.Վարդանյան Ս.Ս.Քեյյան, Ա.Գ.Հակոբյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի ընտրության փակ (գաղտնի) քվեարկության վերաբերյալ, ըստ որի *քվեարկությանը մասնակցել են 36 անդամներ: Կողմ՝ 35, Դեմ՝ 1, Անվավեր՝ 0 /արձանագրությունը կցվում է/:*

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի արդյունքները: Այն հաստատվեց միաձայն:

Խորհրդի նախագահ

Պ.Գ.Դավթյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան